Հավելված
23.02.2023թ.
ՃՀՄ 8-րդ համագումարի
թիվ 8-5 որոշման

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության 8-րդ համագումար

2023-2027թթ. գործունեության ծրագիր (հիմնական ուղղություններ)

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային արհմիության 8-րդ համագումարը գտնում է, որ ներկա տնտեսական համակարգը բարեփոխման կարիք ունի. այժմ պետությունում տեղի ունեցող քաղաքական, օրենսդրական, սոցիալական և բոլոր այլ նախաձեռնությունները հիմնականում բխում են խոշոր տնտեսվարողների և գործատուների շահերից: Մեզ պետք է այնպիսի տնտեսական քաղաքականություն, որում քաղաքացիների շահերը գերադասվեն ֆինանսական շահերից, առաջնային լինեն սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծումը, պետական ծախսերը չդիտվեն որպես բեռ, այլ լինեն շարժիչ ուժ տնտեսության համար:

Նման փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ ենք համարում ՃՀՄ աշխատակազմի, անդամ կազմակերպությունների և միությունների աշխատանքները կազմակերպել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ազդեցության ուժեղացում

Նախորդ 5 տարիներին խնդիր էինք դրել նպաստել և պայքարել՝

- ժողովրդավարական պետության կայացման և բաց հասարակության կառուցման համար, որտեղ հարգանքն ու արժանապատվությունը, արդարությունն ու օրենքի գերակայությունը բոլորի համար են
- կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների, տնտեսական զարգացման, ռեսուրսների արդար բաշխվածության համար
- աշխատողների դերի ու ազդեցության ուժեղացման համար:

Կարող ենք փաստել, որ որոշ դրական փոփոխությունների հաջողվել է հասնել. այնուամենայնիվ, պետք է շարունակենք աշխատանքները նշված ուղղություններով:

Արհմիությունների ամրապնդումը, ազդեցության ու հեղինակության ուժեղացումը մեր նպատակներին հասնելու համար շարունակում է մնալ կարևոր նախապայմանը:

Դրան հնարավոր է հասնել միայն արհմիության անդամների թվաքանակի մեծացման դեպքում. մեզ միացած յուրաքանչյուր աշխատող իր լուման ունի մեր ազդեցության ուժեղացման մեջ:

Արհմիություններն ուժեղանում են ոչ միայն թվաքանակի հաշվին, այլ նաև այն պարագայում, երբ աշխատողները գիտակցում են, որ իրենք կարող ուժ են, ի վիճակի են միասին լուծել իրենց հուզող խնդիրները:

Աշխատողների միավորումը սկսվում է աշխատատեղում: Մեր խնդիրն է աշխատատեղերում բացահայտել և կրթել ակտիվիստներին ու առաջնորդներին՝ ամրապնդելով արհեստակցական կազմակերպությունները և ներգրավելով նոր անդամներ:

Ճյուղային արհմիությունը շարունակելու է աջակցել անդամ կազմակերպություններին՝ աշխատողներին արհմիության անդամ դառնալուն մոտիվացնելուն՝ ակնկալելով անդամների թվի զգալի ավելացում:

Արհմիության անդամների թվաքանակն ավելացնելու և ֆինանսական բազան ամրապնդելու համար աշխատելու ենք այն կազմակերպությունների հետ, որոնց աշխատակիցները դեռևս միավորված չեն արհեստակցական միություններում՝ նրանց մեզ միավորելու նպատակով:

Փորձելու ենք նորաստեղծ խոշորացված համայնքներում արհեստակցական կազմակերպություններ ստեղծել:

Ակտիվացնելու ենք գործող արհեստակցական կազմակերպությունները և նրանց անդամներին:

Մեր առջև դրված խնդիրների լուծման նպատակով կարևորում ենք աշխատողների շահերի պաշտպանությանն ուղղված զանգվածային տարբեր միջոցառումների կազմակերպումը: Վերջին տարիներին նման միջոցառումների անցկացումը բարդ է եղել, կապված համավարակի ու պատերազմների, ինչպես նաև ներքին քաղաքական անկայուն իրավիճակի հետ: Այսուհետ պետք է նոր ուղիներ փնտրենք արհմիության արշավները կազմակերպելու համար:

Շարունակելու ենք

- կազմակերպել սպորտային, մշակութային միջոցառումներ կամ մասնագիտական մրցույթներ՝ արհմիությունը գրավիչ դարձնելու նպատակով
- կայքի, սոցիալական ցանցերի, տեղեկագրի, թռուցիկների միջոցով տարածել անդամ կազմակերպությունների դրական փորձը
- ակտիվորեն համագործակցել ՀԱՄԿ-ի, ՄՓՊ-ի, EPSU-ի, PSI-ի և այլ արհմիութենական ու միջազգային կառույցների հետ՝ համաշխարհային արհմիութենական փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով: Արհմիութենական համերաշխության շրջանակներում մասնակցել համատեղ գործողությունների և սատարող միջոցառումներին: Մասնակցել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ծրագրերի մշակմանը և դրանց իրականացման գործընթացներին

ՀԱՄԿ-ի ղեկավարության կազմում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք նաև մեր արհմիության հետևողական աշխատանքի շնորհիվ են իրականություն դարձել, այսօր հնարավորություն են ընձեռնել աշխատողներին տրամադրել ոչ միայն իրավաբանական խորհրդատվություն, այլ նաև անվճար փաստաբանական ծառայություն: Օգտագործելու ենք այդ հնարավորությունը աշխատողների խախտված իրավունքները վերականգնելու համար:

2. Արժանապատիվ աշխատանք և սոցիալական գործընկերություն

Վերջին տարիներին, այդ թվում մեր ջանքերի շնորհիվ, մի քանի անգամ տեղի է ունեցել նվազագույն աշխատավարձի բարձրացում: 2023 թվականին ևս բարձրացվել է թե՛ նվազագույն աշխատավարձը, թե՛ քաղծառայողների բազային աշխատավարձը, սակայն պետական և համայնքային ծառայություններում իրական աշխատավարձի չափը շարունակում է մնալ չափազանց ցածր և չի ապահովում աշխատողի ֆինանսական կայունությունը, ընտանիքի սոցիալ-տնտեսական պատշաճ վիճակը, հանգստի և ապագայի հետ կապված ծախսերը: Ցածր աշխատավարձը կյանքի ցածր որակի հիմնական պատճառներից մեկն է: Գնաճը, մասնավորապես 2022 թվականին, հասավ աննախադեպ չափերի, բայց համարժեք աշխատավարձերի բարձրացում տեղի չունեցավ աշխատավարձի ինդեքսավորման վերաբերյալ օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով:

ՀԱՄԿ-ի և գործընկեր ճյուղային արհմիությունների հետ միասին սոցիալական գործընկերության եռակողմ ձևաչափով աշխատելու ենք նվազագույն աշխատավարձի աճի և ինդեքսավորման մեխանիզմի ձևավորման ուղղությամբ:

Վերը նշված խնդիրները լուծելիս կարևոր է, որ քաղաքականության մշակումը տեղի ունենա սոցիալական գործընկերության սկզբունքը պահպանելով: Այնինչ քաղաքացիական և համայնքային ծառայողների համար բացակայում է ոլորտային սոցիալական գործընկերության իրավունքի իրացման հնարավորությունը՝ պետական կողմը ներկայացնող մարմնի՝ սոցիալական գործընկերոջ բացակայության պատճառով: Հիմնական աշխատանքն օրենսդրության փոփոխության շրջանակներում պետք է ուղղված լինի նշված իրավունքի իրացումը վերականգնելուն:

Աշխատանքային օրենսդրության փոփոխությունների շրջանակներում մենք բազմիցս առաջարկել ենք այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան կնքելու ճյուղային կոլեկտիվ պայմանագիր քաղաքացիական ծառայողների և համայնքային ծառայողների համար: Սակայն, մինչ այժմ այդ նպատակին չենք կարողացել հասնել: Մոտակա ժամանակահատվածում պետք է շարունակենք առաջ մղել մեր առաջարկները:

Միաժամանակ, տեղերում, գործատուների հետ կոլեկտիվ պայմանագրերի կնքման և այլ հնարավոր միջոցներով իրականացնելու ենք աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերի և իրավունքների պաշտպանությունը, ձգտելու ենք հասնել աշխատողների համար ավելի բարենպաստ պայմանների՝ գործող օրենսդրության համեմատ:

COVID-19 համավարակի ընթացքում պարզ դարձավ, որ շատ տեղերում բացակայում էին աշխատանքի անվտանգության և առողջության պահպանմանն ուղղված միջոցառումները և ներքին կարգերը: Ճյուղային արհմիության ակտիվի ուժերով հսկողություն ենք սահմանելու գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, այդ թվում՝ աշխատողների առողջության և անվտանգության պահպանության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ: Աշխատելու ենք ոչ պետական վերահսկողության ձևերի կատարելագործման և զարգացման ուղղությամբ:

Ավարտվել է համայնքների միավորման գործընթացը: Որոշ տեղերում գործընթացը տեղի ունեցել աշխատանքային իրավունքների խախտումներով: Սակայն միանշանակ է, որ այն պետք է նպաստի համայնքների զարգացմանը, համայնքներում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը և հանրային ծառայությունների որակի բարձրացմանը զուգընթաց աշխատավարձերի աստիճանական բարձրացմանը: Շարունակելու ենք պայքարել համայնքային ծառայողների աշխատավարձերի արդար ձևավորման, ինչպես նաև վերջիններիս սոցփաթեթով ապահովելու համար:

Բիզնեսի և քաղաքացիների հարմարավետությունն ապահովելու նպատակով պետական կառավարման համակարգում կատարվում է թվային տեխնոլոգիաների ներդրում: Սակայն, փաստում ենք, որ որոշ դեպքերում թվայնացումը քաղաքացիների համար ավելի է դժվարացրել հանրային ծառայություններից օգտվելը, իսկ անձնական տվյալների մշակման գործընթացը թե՛ քաղաքացիների, և թե՛ աշխատողների համար այնքան էլ թափանցիկ չէ: Մենք սահմանելու ենք ժողովրդավար վերահսկողություն մատչելի ու անվտանգ թվային հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ, որպեսզի բարձրացվի համապատասխան մարմինների վստահելիությունը և ծառայությունների մատուցման արդարությունը: Այս ոլորտի աշխատողներն ու իրենց արհմիություններն են կարևորագույն դեր խաղում նշված սկզբունքների և օրենքի գերակայության դեմ ուղղված գործողությունների կանխարգելման գործում:

Հանրային ծառայությունների թվայնացումը կարող է բերել աշխատողների աշխատանքի և մասնավոր կյանքի միջև եղած սահմանների վերացման՝ միաժամանակ ավելացնելով աշխատաժամանակը: Մեր խնդիրն է պայքարել, որ անցումը թվային տեխնոլոգիաներին նպաստի ծառայությունների ավելի բարձրակարգ մատուցմանը, այլ ոչ թե աշխատատեղերի կրճատմանը և աշխատողների իրավունքների ոտնահարմանը:

Չնայած վերջին տարիներին Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը նոր լիազորություններով է օժտվել և իրավունք է ստացել վերահսկել աշխատանքային օրենսդրության նորմերի կատարումը և արձագանքում է իրավունքների խախտումների վերաբերյալ քաղաքացիների դիմումներին, սակայն ոչ բոլոր դեպքերում են աշխատող քաղաքացիները պատրաստ իրենց ինքնությունը բացահայտելով դիմում ներկայացնել տեսչական մարմին: Կարևորում ենք հասնել այնպիսի օրենսդրական փոփոխությունների, որոնք թույլ կտան անանուն դիմումներին ընթացք տալուն: Պետք է աշխատենք տեսչական մարմնի կատարելագործման, դրա կարողությունների և հմտությունների ավելացման ուղղությամբ, մանավանդ՝ արհմիությունների իրավունքների խախտումների համատեքստում:

3. Արհմիությունների իրավունքներ

Թեպետ արհմիությունների գործունեությանը խոչընդոտելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է և՛ վարչական, և՛ քրեական պատասխանատվություն՝ փաստում ենք, որ գործնականում արհմիությունների իրավունքները հաճախակի խախտվում են: Փորձը ցույց է տալիս, որ կան ղեկավարներ (գործատուներ), որոնք ցանկանում են օգտագործել արհմիության ֆինանսական միջոցները կառավարման խնդիրները լուծելու համար, կան այնպիսիք, որոնք կարծում են, թե արհմիությունը հատուկ ստեղծված է հենց այդ նպատակով:

Տեղի ունեցող խախտումները դժվար ապացուցելի են. աշխատողները դեռևս պատրաստ չեն բարձրաձայնելու դրանց մասին՝ գործատուների հետ լավ հարաբերություններ պահպանելու համար, ինչպես նաև հանրապետությունում տիրող սոցիալական ծանր վիճակի պատճառով աշխատանքը կորցնելու վախից:

Աշխատանքային օրենսգրքի և «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի նախագծերի քննարկման շրջանակներում առաջարկել ենք ավելի հստակ օրենսդրական կարգավորումներ՝ սահմանել արհմիությունների իրավունքների խախտումների տեսակները: Սակայն դրանք դեռ չեն ընդունվել: Շարունակելու ենք աշխատել օրենսդրությամբ համապատասխան դրույթներ ամրագրելու ուղղությամբ:

Միաժամանակ արհմիությունների իրավունքների խախտման դեմ պայքարելու ենք՝

1. անդամ կազմակերպությունների ղեկավար մարմիններում ընտրվածների համար հատուկ դասընթացների անցկացման միջոցով
2. գործատուների և նրանց ներկայացուցիչների հետ հանդիպումների հաճախակի կազմակերպմամբ, այդ ոլորտին նրանց տեղեկացվածության բարձրացմամբ
3. աշխատողների իրավագիտակցության ձևավորմամբ
4. ոլորտի մասին տեղեկատվության տարածմամբ՝ օգտագործելով սոցիալական գործընկերության հարթակը, միջազգային գործընկերությունը, էլեկտրոնային զանգվածային լրատվական միջոցները, արհմիության կայքը, ակտիվ ենք լինելու սոցցանցերում:

4. Երիտասարդական քաղաքականություն

Ակնհայտ է, որ արհմիութենական շարժումը արդիականացվում է ամբողջ աշխարհում և այդ գործընթացից անմասն չի կարող մնալ նաև Հայաստանը: Դրա հետ կապված մեզ անհրաժեշտ է ակտիվ երիտասարդության ներգրավումը, ինչը արհմիություն կբերի ոչ ստանդարտ մտածողություն և շարունակական զարգացման հնարավորություն:

Համարելով, որ ակտիվ երիտասարդական քաղաքականությունը ուժեղ արհմիության գրավականն է՝ նախորդ տարիներին մեր ճյուղային արհմիությունը աշխատանքներ է տարել երիտասարդներին ներգրավելու ուղղությամբ, ստեղծվել է **երիտասարդական խորհուրդ**, կազմակերպվել են երիտասարդական միջոցառումներ:

Սակայն երիտասարդական խորհուրդի առաջին կազմի երիտասարդների մի մասը արդեն դուրս է եկել համապատասխան տարիքից, որոշ մասը փոխել են իրենց աշխատատեղը և դադարել են լինել մեր արհմիության անդամ: Միաժամանակ փաստում ենք, որ երիտասարդներից շատերը չեն պատկերացնում իրենց դերը արհմիութենական կառույցում՝ այդ թվում նաև տեղեկատվության պակասի և այլ պատճառներով:

Կարևոր ենք համարում նշել, որ երիտասարդների շրջանում մեր կատարած աշխատանքի շնորհիվ

- ունեցել ենք երիտասարդների մասնակցություն միջազգային արհմիութենական կառույցներում
- արհեստակցական կազմակերպություններում երիտասարդներ են ընտրվել արհմիությունների ղեկավար մարմիններում
- հաջողվել է հիմք դնել ՀԱՄԿ-ում Երիտասարդական հանձնաժողովի ակտիվացմանը և դրա իրական գործունեության ծավալմանը:

Համոզված ենք, որ ժամանակակից աշխարհում առանց ուժեղ երիտասարդական բաղադրիչի հնարավոր չէ արհմիության դիրքերի ամրապնդումը, ազդեցության ուժեղացումը սոցիալ-տնտեսական գործընթացների վրա, այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում շարունակել աշխատանքը.

- կրթելով Երիտասարդական Խորհրդի անդամներին և պատրաստելով նրանց՝ իրենց արհմիութենական կառույցներում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու և արհմիութենական գաղափարախոսությունը տարածելու համար
- ակտիվացնելով երիտասարդներին, որպեսզի վերջիններս աջակցեն իրենց կազմակերպություններում երիտասարդական մարմինների ձևավորմանը ու գործունեությանը
- պատրաստելով նոր երիտասարդներ Եվրոպայի հանրային ծառայության արհմիության երիտասարդական ցանցի աշխատանքներում ներգրավելու համար
- աջակցելով արհմիության երիտասարդ անդամների կառուցողական առաջարկություններն ու գաղափարները հավաքագրելուն և իրագործելուն
- ձևավորելով կադրային ռեզերվ արհեստակցական կազմակերպությունների ղեկավար մարմինների համար

5. Կանանց և տղամարդկանց հավասարություն

Փաստում ենք, որ Հայաստանի Հանրապետության կայացման գործում կանայք ունեցել և շարունակում են զգալի դեր ունենալ: Նրանք կազմում են աշխատող բնակչության գրեթե կեսը: Կանայք ակտիվ մասնակցում են արհմիութենական շարժման ամրապնդմանը: Մեր արհմիության անդամ կազմակերպությունների ղեկավարների գերակշիռ մասը կանայք են: Սա փաստում է, որ կանայք ավելի ակտիվ են հասարակական աշխատանքներում: Նրանք զգալի ներդրում են ունենում իրենց և այլոց իրավունքների և սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության գործում: Այնուամենայնիվ, արժանապատիվ աշխատանքի և հավասարության ճանապարհին կանայք դեռևս շարունակում են բախվել լուրջ խոչընդոտների: Առկա են հնարավորությունների ու

առաջխաղացման անհավասարություններ: Տղամարդիկ ավելի հաճախ են կարիերայում առաջընթաց ունենում: Ստանալով բարձրագույն կրթություն և ունենալով համապատասխան փորձ ու գիտելիքներ՝ կանայք հիմնականում շարունակում են զբաղեցնել միջին և ցածր մասնագիտացում պահանջող աշխատատեղեր:

Այսօրվա փոփոխվող աշխարհը առաջին հերթին իր ազդեցությունն է գործում հենց կանանց վրա: Կոշտ խնայողության և մասնավորեցման ծրագրերը բերում են սոցիալական ծառայությունների շուկայականացման՝ վտանգելով դրանց մատչելիությունը:

Նախորդ տարիներին համատեղ աշխատել ենք կանանց իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունների հետ հանրային կարծիքի ձևավորման ուղղությամբ՝ հօգուտ կանանց հավասար իրավունքների, ազատությունների ու հնարավորությունների:

Հաշվի առնելով գենդերային գործոնի դերը սոցիալական արդարության և սոցիալ-տնտեսական հավասարություններին հասնելու գործընթացում՝

- ակտիվ մասնակցելու ենք ՀԱՄԿ-ի և միջազգային արհմիություններում կանանց հանձնաժողովների աշխատանքներին
- նպաստելու ենք կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության ստեղծմանը՝ աշխատանքային, հանրային-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտում՝ ղեկավարվելով ՄԱԿ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության փաստաթղթերով
- շարունակելու ենք տեղեկատվական և կրթական աշխատանքը արհմիութենական ղեկավարների հետ՝ աշխատավայրում, արհմիութենական կոլեգիալ մարմիններում, կոլեկտիվ պայմանագրերում գենդերային ասպեկտները ներառելու նպատակով:

6. Կոռուպցիայի դեմ պայքար և հարկային արդարություն

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը դատապարտում է խոշոր տնտեսվարողների և բիզնեսների կողմից հարկերից խուսափելու և հարկերը նվազեցնելու փորձերը, համարելով, որ դրանք ուղղված են աշխատող համայնքի դեմ: Հարկերը հանդիսանում են հանրային սեփականություն, որը պետության կողմից պետք է օգտագործվի որակյալ ու մատչելի հանրային ծառայություններ մատուցելու, մարդակենտրոն և արժանապատիվ տնտեսություն զարգացնելու, աղքատությունը կրճատելու, պետական պաշտպանությունն ապահովելու, մարդու իրավունքները պաշտպանելու համար: Հարկումն ունի նաև հարստության վերաբաշխման և սոցիալական կայունություն ստեղծելու կարևորագույն գործառույթ, որը կաշխատի միայն պրոգրեսիվ, արդարացի և թափանցիկ հարկային համակարգ ունենալու դեպքում:

Ներկայումս երկրում ներդրված է համահարթեցված անարդար հարկային համակարգը, որի դեպքում թե՛ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողը, և թե՛ ամենաբարձր աշխատավարձ ստացող աշխատողները միանման հարկային պարտավորություններ ունեն: Ավելին, բիզնեսի շահութահարկի տոկոսադրույքն (18%)

ավելի պակաս է, քան աշխատողների եկամտահարկը: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր ամիս տնտեսվարողներին, այդ թվում՝ խոշոր և հարուստ տնտեսվարողներին շնորհում է հարկային և մաքսային արտոնություններ կամ տրամադրում է պետական աջակցություն, որոնք, մեր տեսանկյունից, ոչ միշտ են արդարացված: Վերջին տարիներին կատարված տարբեր հետազոտություններ ցույց են տվել, որ համահարթ հարկային համակարգերը հանգեցնում են սոցիալական համակարգերի քայքայման, հանրային ծառայությունների որակի նվազման և, ի վերջո, աշխատող համայնքին ծառայելու փոխարեն, արտոնություններ են տալիս հարուստներին:

Դատապարտելի ենք համարում կոռուպցիայի բոլոր դրսևորումները, քանի որ դրանք տապալում են իշխանությունների հանդեպ վստահությունը, փոշիացնում են հանրային ռեսուրսները, խոչընդոտում են պետության զարգացումը և խորացնում են աղքատությունը: Կոռուպցիային մեծապես նպաստում են բիզնեսի և իշխանությունների միջև սերտ կապերը, պետական գնումների հետ կապված ոչ պատշաճ օրենսդրական կարգավորումները, ոչ արդյունավետ արդարադատության համակարգը: Կոռուպցիան, ի վերջո, տապալում է նաև օրենքի գերակայությունը և ժողովրդավարության ինստիտուտները: Չնայած, որ 2018 թվականի թավշյա հեղափոխության հիմնական շարժառիթը կոռուպցիայի վերացումն էր, այդ նպատակին հասնելու համար դեռ բավարար երկար ճանապարհ կա անցնելու:

Ի թիվս այլ գործողությունների՝

- պայքարելու ենք պետական գումարների ոչ արդյունավետ ծախսերի դեմ
- շարունակելու ենք առաջ մղել պետական և ավելի արդար ու ֆունկցիոնալ կենսաթոշակային համակարգի ներդրման գաղափարը
- փորձելու ենք կանխել պետական ապարատի կրճատումները, մասնավորեցումներն ու պատվիրակումները (outsourcing)
- տեղեկության տարածման միջոցով շարունակելու բարձրաձայնել և պայքարել դեղին արհմիությունների ստեղծման դեմ: